Կարմիր Աղեկ

Մակերես՝ 4.02 կմ^2

Բնակչություն՝ 160

Կարմիր Աղեկի (արեւմտահայերեն՝ լավ) գյուղը վերաբնակեցվել է 1924թ.: Սակայն գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է: Դրա վկայությունն են համայնքի տարածքում գտնվող VI-VIIդդ բազմաթիվ գերեզմանները:
Գյուղը գտնվում է մարզի վարչական տարածքի հյուսիս-արեւմտյան մասում, որի ընդհանուր տարածքը կազմում է 4.02 հա, մարզկենտրոնից՝ Վանաձորից, 63 կմ հեռավորության վրա: Մոտակա երկթուղին գտնվում է Ալավերդի քաղաքում, համայնքից 26 կմ հեռավորության վրա: Համայնքի մշակելի հողերը գտնվում են թեք հարթությունների՝ թույլ թեք եւ միջին թեք լանջերի վրա:
Համայնքն ունի լեռնատափաստանային գոտուն բնորոշ կլիմա: Տեղումների միջին քանակը կազմում է 550 մմ, որը տարվա տարբեր եղանակներին եւ ամիսներին բաշխվում է անհավասարաչափ: Օդի տարեկան կիջին ջերմաստիճանը կազմում է +6 աստիճան, հուլիս-օգոստոս ամիսներին՝ 20 աստիճան, բացարձակ նվազագույնը հասնում է -20 աստիճանի, իսկ բացարձակ առավելագույնը՝ +34 աստիճան: Գարնանային վերջին ցրտահարությունները լինում են ապրիլ ամսվա վերջին տասնօրյակին, իսկ աշնանային ցրտահարությունները՝
սեպտեմբերի կեսերին: Համայնքի տարածքում բնական բուսական ծածկույթը բաղկացած է հացազգատարածքներից, թիթեռածաղկավոր բույսերից, թփուտներից եւ անտառային բույսերից: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է դաշտավարությամբ, ցանվում է հացահատիկ՝ 55 հա, կարտոֆիլ՝ 60 հա: Բացի դրանցից զբաղվում են նաեւ անասնապահությամբ՝ համայնքն ունի 200 գլուխ խոշոր, 100 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 100 գլուխ խոզեր: Անասնապահության զարգացման համար նպաստավոր պայմաններ չկան: Համայնքն ունի գրադարան՝ 4900 անուն գիրք: Գրադարանի շենքը գտնվում է բավարար վիճակում, այն տեղաբաշխված է գյուղապետարանի շենքում:
Համայնքում կա ֆուտբոլի դաշտ, որտեղ կազմակերպվում են ֆուտբոլային պարապմունքներ, գնվել է համապատասխան համազգեստ, գնդակներ, կազմակերպվում են ֆուտբոլի միջհամայնքային խաղեր, վոլեյբոլի խաղեր, սեղանի թենիսի մրցումներ